



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 05 » մարտի 2018թ.

№ 42-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ, 1.23-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2018 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝

հնարավոր հեղեղավտանգ ժամանակահատվածում պատրաստականության բերել մարզային տարահանման հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում հեղեղավտանգ տարածքներից անվտանգ տարածք բնակչության, կենդանիների, նյութական միջոցների տարահանման և տեղաբաշխման միջոցառումները կազմակերպելու համար.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի հետ համատեղ մշակել մարզի տարածքում 2018 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիր և այն մինչև 2018 թվականի մարտի 15-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը,

բ. հեղեղումների դեպքում, տուժած տարածքներում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով բնակչությանը պարբերաբար իրազեկել սպառնացող վտանգների և ձեռնարկվելիք միջոցառումների մասին.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանի պետին՝

ապահովել ջրաչափական դիտակետերից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 09:00-ին և 21:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու, Արթիկի, Աշոցքի, Ամասիայի օդերևութաբանական կայանների պետերին՝

ապահովել օդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 09:00-ին և 21:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

5) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Զրառ» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի մարզի թվով 6՝ Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի, Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին և «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենին՝

ա. հեղեղավտանգ ժամանակահատվածում ուժեղացնել հսկողությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գտնվող ջրամբարների և ջրանցքների հիդրոլոգիական ռեժիմների նկատմամբ և այդ մասին տրամադրել տեղեկատվություն